

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019թ. սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VI^ա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թամարա Սամսոնյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների զծով տեղակալ Զոյա Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու, աշակերտների հանգիստը և ժամանցը կազմակերպելու հարցը:
4. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, հերթապահություն/:

1. Լսեցին. - Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թամարա Սամսոնյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 6-րդ և դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նշել մնացած չորս անդամների թեկնածուներին և: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն: Նախագահի թեկնածու առաջադրվեց Լիլիթ Պապյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: Միաձայն ընտրվեց նախագահ:

6-րդ ա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Լիլիթ Պապյան /նախագահ/
2. Մելինե Սարգսյան /անդամ/
3. Կարինե Մարտիրոսյան /անդամ/
4. Նունե Աբրահամյան /անդամ/
5. Զոյա Ղարիբյան /անդամ/

2. Լսեցին. - Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Թամարա Սամսոնյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում: Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ տեսրեր, գրենական պիտույքներ:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին ձեռք բերելու անհրաժեշտ տեսրեր:

3. Լսեցին. - Ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաների նյութական օգնություն ցույց տալու աշակերտների հանգստի ժամանցը կազմակերպելու հարցը:

Դասղեկ Թամարա Սամսոնյանը ներկայացրեց, որ բոլոր դասարաններում էլ կան սոցիալապես անապահով և ծնողագուրկ

երեխաներ, որոնց դասագրքերի վարձավճարների համար օգնություն է տրամադրվում դպրոցի կողմից: Սակայն ուսումնաօժանդակ նյութերի ձեռքբերման, էքսկուրսիաներ, թատրոն, թանգարաններ այցելությունների ժամանակ նույնպես անհրաժեշտ է ապահովել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ներկայությունը: Չնայած նրան, որ մշակութային օջախներ այցելությունների համար ՀՀ ԿԳՄՄ նախարարությունը տարեկան մեկական այցելության անվճար հնարավորություն է տրամադրել դպրոցականների համար, սակայն տրանսպորտի և սննդի համար էլ են գումար հատկացնում: Անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածությունը կոլեկտիվին, ընկերների հետ շփումները ապահովելու և նրանց տարիքային հոգեբանական զարգացումը ապահովելու համար: Որոշակի գումարային ներդրումներով ավելի ապահով վիճակում գտնվող ծնողները կարող են իրենց երեխաների մոտ ապահովել հասակակիցների նկատմամբ ճիշտ մարդկային հարաբերությունների ձևավորումը, քանի որ դա գտնվում է նաև ծնողական խորհրդի կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Որոշեցին - Անհրաժեշտ օգնություն ցուցաբերել նաև տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ:

4. Լսեցին - Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Թամարա Սամսոնյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցն աշխատում է հնգօրյա ռեժիմով, դասերն սկսվում են ժամը 9: 00-ին, ավարտվում՝ 15: 00-ին: Նա ծնողներին հորդորեց լինել հետևողական իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, օրագրերով և աշակերտին վայել հագուկապով:

Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն դպրոցում:

Պետք է մշտապես պահել ծնող-դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելել դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու, աշակերտների վարքը և ուսման առաջադիմությունը բարձր մակարդակի հասցնելու համար:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին միշտ պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ *Մ. Ասի* Լիլիթ Պապյան
Քարտուղար՝ *Նանյ* Նունե Աբրահամյան